

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2020Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020 թվականին տեղի է ունեցել ՀՀ ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդի մեկ նիստ՝ պայմանավորված կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով հանրապետությունում հայտարարված արտակարգ դրությամբ, ապա՝ պատերազմի հանգամանքով:

Նիստը տեղի է ունեցել առցանց՝ ZOOM հարթակում, **հուլիսի 10-ին, ժամը 16.00-18.00:**

### **Նիստի օրակարգը՝**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանի բացման խոսք

2. «Հանրակրթության պետական չափորոշի ձևավորման և հաստատման կարգի» նախագծի քննարկում /զեկուցող՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյան/

3. Հարց ու պատասխան

4. Ելույթներ /մինչև 3 րոպե/3) Քննարկվող հարցերի և ելույթների հիմնական դրույթները՝

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը նախարարին կից հասարակական խորհրդի անդամներին է ներկայացրել չափորոշչի հիմնական սկզբունքները: Ըստ փոխնախարարի՝ շուրջ մեկ տարի չափորոշչի մշակման աշխատանքներում ներգրավված են եղել ավելի քան 70 մասնագետ, որոնց թվում՝ գործող մանկավարժներ: «Չափորոշչի նախագծի ամենակարևոր առանձնահատկությունն այն է, որ առաջարկվում է դպրոցից պահանջները ձևակերպել ոչ թե գիտելիքային իմացության, այլ վերառարկայական կարողունակությունների՝ կոմպետենցիաների տեսքով: Ութ առանցքային կարողունակություններն ամփոփում են դպրոցից ընդհանրական պահանջը, թե ինչպիսի շրջանավարտ ենք ուզում ունենալ», - նշել է նախարարի տեղակալը և ընդգծել, որ չափորոշչի նախագծով՝ խնդիր է դրվել հասկանալ ու ձևակերպել, թե ինչպես է առանձին առարկան մասնակցում ընդհանուր կարողունակության ձևավորմանը: «Մենք հանրակրթությունը պատկերացնում ենք որպես մի գործընթաց, որտեղ ամենակարևորը սովորողի շահերի պաշտպանությունն է, այլ ոչ թե առարկաների: Բացի այդ, մենք դպրոցին և ուսուցչին տալիս ենք ազատություն՝ իր վերջնաարդյունքը որոշելու համար», - նշել է Ժաննա Անդրեասյանը՝ խորհրդի անդամներին ներկայացնելով չափորոշչի նախագծով առաջարկվող հիմնական փոփոխությունները: Այն է՝

- Ծրագրի էական բեռնաթափում՝ ըստ աստիճանների նվազագույն ժամաքանակների մասով, որի շնորհիվ առաջարկվում է երկրորդ և չորրորդ դասարանում ևս երկուական շաբաթ հավելյալ արձակուրդի հնարավորություն ուսումնական տարվա ընթացքում:
- Գնահատման փոփոխություն դեպի բնութագրող գնահատումը. հրաժարվել անբավարար գնահատականից, դրա փոխարեն սովորողների հետ աշխատել տարվա ընթացքում, այդ թվում կիրառելով հարակից գործիքները՝ պարտադիր կրթությունից դուրս մնացող

երեխաների հաշվառման, երկարօրյա ուսուցման հնարավորությունները: Միավորային գնահատումն առաջարկվում է սկսել հինգերորդ դասարանի երկրորդ կիսամյակից:

- Բացի ուսումնական պլանի պետական պարտադիր և դպրոցական բաղադրիչներից, առաջարկվում է անհատական բաղադրիչը, որի շրջանակում սովորողի հանդեպ անհատականացված մոտեցման հնարավորություն է ստեղծվում: Նախագծային ուսուցումը պարտադիր կլինի 7-12-րդ դասարաններում առնվազն մեկ նախագծի տեսքով, ինչպես որևէ առարկայի, այնպես էլ համայնքային ծրագրերի շրջանակում, որոնք ուղղված կլինեն որոշակի սոցիալական կամ բնապահպանական խնդիրների լուծմանը:
- Ավագ դպրոցում առաջարկվում է հոսքային ուսուցումից հրաժարվել՝ ի նպաստ անհատականացված դասացուցակի, որը կկազմվի պարտադիր առարկաների համադրությամբ և այլն:

Նիստին մասնակցող խորհրդի անդամների ներկայացրած հանրային առաջարկները, դիտողությունները և դրանց վերաբերյալ պաշտոնական մեկնաբանությունները.

Փոխնախարարի զեկույցից հետո հասարակական խորհրդի անդամները հանդես են եկել ելույթներով՝ ներկայացնելով իրենց առաջարկություններն ու դիտողությունները: Վերջիններս իրենց գոհունակությունն են հայտնել նախագծի վերաբերյալ՝ ընդգծելով, որ փաստաթղթով հստակ ամրագրվում է համապատասխան արժեքային համակարգով և քաղաքացիական գիտակցությամբ սովորողի ձևավորումը:

Խորհրդի անդամները բազմաթիվ հարցեր են ուղղել բանախոսին, մասնավորապես, «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ-ի ներկայացուցիչ Գրիգոր Երիցյանին հետաքրքրել է՝ արդյոք չափորոշիչ նախագծով պայմանավորված կրթական այս մեծ բարեփոխումն ուղեկցվելո՞ւ է հարակից այլ փոփոխություններով՝ դպրոցների

կառավարման համակարգ և այլն, որքանով կարող է ռիսկային լինել տնօրենների սուբյեկտիվ ընտրությունը՝ կապված ինտեգրված առարկաների հետ, Հանրային քաղաքականության ինստիտուտի ներկայացուցիչ Ավետիք Մեջլումյանն անդրադարձել է ուսուցիչների շարունակական վերապատրաստմանը, Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի ներկայացուցիչ Մարինա Գալստյանին հետաքրքրել է, թե ինչպիսի՞ն է լինելու չափորոշի իրականացման ճանապարհային քարտեզը և կներդրվի՞ արդյոք մոնիթորինգի համակարգ: ՀՀ Արմավիրի մարզի թիվ 6 հիմնական դպրոցի ներկայացուցիչ Խորեն Ոսկանյանին հետաքրքրել է, թե ծրագրի բեռնաթափումը ո՞ր առարկաների հաշվին է լինելու, բացի այդ, խնդիր է դրվել փաստաթղթում ներառական կրթության մասով հստակեցման, ինչպես նաև անդրադարձ է եղել սոցիալական մանկավարժի հաստիքին: Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոնի» ներկայացուցիչ Կարեն Տերտերյանը, «ՀԿ կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ ներկայացուցիչ Վահե Խաչիկյանը, «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության» ներկայացուցիչ Արմեն Մարտիրոսյանը և «Համագործակցային կրթական ծրագրեր» ՀԿ ներկայացուցիչ Լուսինե Թոփչյանն իրենց ելույթներում անդրադարձել են նախագծում ամրագրված որոշակի դրույթների:

Հնչել են օրենքի նախագծի վերաբերյալ այլ հարցեր:

Ժաննա Անդրեասյանը, մանրամասն պատասխանելով հնչեցված հարցերին և արձագանքելով բոլոր մտահոգություններին, շնորհակալություն է հայտնել առաջարկների և շահագրգիռ քննարկման համար: Նրա խոսքով՝ նախագծի վերաբերյալ ստացված հազարավոր առաջարկները վկայում են այն մասին, թե հանրությունը որքան է կարևորում կրթության ոլորտի փոփոխությունները: Ժաննա Անդրեասյանը շեշտել է, որ ԿԳՄՍ նախարարությունը պատրաստակամ է քննարկել բոլոր առաջարկությունները և իրականացնել համապատասխան լրամշակումներ:

Նիստի ավարտին ժաննա Անդրեասյանը ևս մեկ անգամ շնորհակալություն է հայտնել ներկաներին շահագրգիռ քննարկման համար՝ համոզմունք հայտնելով, որ հասարակական խորհրդի հաջորդ նիստերին կքննարկվեն կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտների նոր բարեփոխումները:

Նիստին որոշում չի կայացվել: